

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Ասատրազյան

(ստորագրություն)



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(վերահաստատված)

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Ասատրազյան

(ստորագրություն)



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. ՀԲԻ-ի ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ ընկերություն) ՀԲԻ-ի ուսանողներին միավորող ընկերություն է:
2. Ընկերությունն իր նպատակների և խնդիրների իրականացման նպատակով համագործակցում է ՀԲԻ-ի գիտական խորհրդի, ուսումնավարչական խորհրդի եւ այլ մարմինների հետ:
3. Ընկերությունը որպես հասարակական միավորում չունի իրավա-բանական անձի կարգավիճակ և իր գործունեությամբ ղեկավարվում է «Հասարակական կազմակերպությունների մասին», «Բարձրագույն և հետրուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
4. Ընկերության հարաբերությունները ՀԲԻ-ի մարմինների հետ կառուցվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ՀԲԻ-ի շրջանակներում գործող կանոններով, ՀԲԻ-ի Գիտական խորհրդի և ռեկտորի այն որոշումներով, որոնք ուղղված են Ընկերության կանոնադրական նպատակների իրագործմանը, ինչպես նաև այլ իրավական ակտերով:
5. Ընկերությունն իր նպատակների ու խնդիրների իրականացման նպատակով համագործակցում է ՀԲԻ-ի գիտական և ուսումնական ստորաբաժանումների, ուսանողական խորհրդի և այլ մարմինների հետ:
6. Ընկերության անվանումն է.

- 1) հայերեն՝ Հայկական բժշկական ինստիտուտի ուսանողական գիտական ընկերություն կամ կրճատ՝ ՀԲԻ-ի ՈՒԳԸ,
 - 2) ռուսերեն՝ Студенческое Научное Общество Армянского медицинского института կամ կարճ՝ СНО АМИ,
 - 3) անգլերեն՝ Students Scientific Society of Armenian medical institut կամ կարճ՝ SSS AMI:
7. Ընկերությունն ունի ձևաթուղթ և այլ անհատականացման միջոցներ:
 8. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0087, Տիտոգրադյան 14:

I. Ընկերության նպատակն ու խնդիրները

9. Ընկերության գլխավոր նպատակն է աջակցել, նպաստել ՀԲԻ-ի ուսանողների գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությանը:
10. Ընկերության խնդիրներն են՝
 - 1) կազմակերպել ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, դասախոսություններ և այլ գիտակրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ,
 - 2) աջակցել ուսանողների գիտահետազոտական գործունեությանը,
 - 3) համագործակցել այլ կրթական հաստատությունների ՈւԳԸ-ի հետ եւ այլ գիտակրթական կենտրոնների եւ կազակերպությունների հետ:

III. Ընկերության կառուցվածքը եւ կառավարումը

11. Ընկերության կառուցվածքային միավորն է ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունը, որը ձևավորվում է ֆակուլտետի ուսանողներից:
12. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպում է ֆակուլտետի գիտական ընկերության աշխատանքները:
13. ՀԲԻ ուսանողական ընկերության կառավարումն իրականացնում է նախագահը:
14. Ընկերության նիստերը գումարվում են ոչ պակաս քան կիսամյակը մեկ անգամ:

15. Ընկերության նախագահը իրավասու է առաջարկություններ ներկայացնել ՀԲԻ գիտական խորհրդին, հաստատել ընկերության ընթացիկ եւ հեռանկարային ծրագրերը, կազմակերպել եւ կառավարել ընկերության գործունեությունը:
16. Ընկերության նիստն իրավագոր է եթե նիստին մասնակցում են անդամների ընդհանուր թվի 2/3-ը:
17. Որոշումները ընդունվում են պարզ մեծամասնությամբ:
18. Ընկերության նախագահը նշանակվում է ՀԲԻ-ի ռեկտորի կողմից:
19. Ընկերության գործունեությունը ուղորդելու համար, ինստիտուտի փորձառու գիտնականներից ռեկտորի հրամանով նշանակվում է ՈւԳԸ կուրատոր:

VI. Նստաշրջանների կազմակերպումն ու անցկացումը

- 1.1 Գիտական նստաշրջանները կազմակերպվում եւ անցկացվում են ընկերության նախագահի կողմից:
- 1.2 Գիտական նստաշրջաններն անցկացվում են տարին մեկ անգամ, երկրորդ կիսամյակի ավարտին:
- 1.3 Ուսանողը նստաշրջանին կարող է ներկայացնել մեկից ավելի գիտական աշխատանքներ: